ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 648- Ա/2 **«_30_» ապրիլի 2024 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7-Ի N 1162-Ա/2 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների պահանջները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 7-ի՝ «Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության՝ հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման չափորոշիչը և օրինակելի ծրագիրը հաստատելու մասին» 1162-Ա/2 հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

X _____

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2024 թ.ապրիլի 30-ի N __648____Ա/2 հրամանի

Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2020թ. սեպտեմբերի 7-ի N 1162-Ա/2 հրամանի

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ ԵՎ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳԻՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Մանկավարժական գործունեությունն ուսուցչից պահանջում է գիտելիքների և մասնագիտական կարողությունների շարունակական բարելավում: Այդ նպատակին է ուղղված ուսուցիչների մասնագիտական զարգացման և վերապատրաստման սույն ծրագիրը, որը կոչված է նպաստելու կրթության որակի բարձրացմանը:

Ուսուցիչների մասնագիտական զարգացման վերապատրաստման առկա կամ հիբրիդ կամ հեռավար եղանակով կազմակերպվող ծրագրի իրականացման համար սահմանվում են հետևյալ նորմատիվային ծավալները (ակադեմիական ժամ)՝

1) տարրական և ձեռնահասության մակարդակ՝ 138 ժամ,
2) տիրապետման մակարդակ՝ 72 ժամ,
3) փորձագետի մակարդակ՝ 35 ժամ:

2. ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման ծրագրի բովանդակությունը նպատակաուղղված է ուսուցչի մասնագիտական չափանիշներին համապատասխան կարողունակությունների ձևավորմանը և ներկայացված է բովանդակության 12 ոլորտներով:
2. Չափորոշչով սահմանվում են վերապատրաստման ծրագրի բովանդակության հետևյալ մակարդակները՝

   1) տարրական և ձեռնահասության.

   2) տիրապետման.

   3) փորձագետի:

3. ՈՒՍՈՒՑՉԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՔԱԳՐՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ ԵՎ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳԻՐԸ

Բաժին	Տարրական և ձեռնահասության մակարդակ	Տիրապետման մակարդակ	Փորձագետի մակարդակ	Կրեդիտ
1.Առարկայական գիտելիքների զարգացում	90	Չի պահանջվում	Չի պահանջվում	Չի նախատեսվում
2. Դասընթացների և դասերի պլանավորում	8	4	2	1
3. Դասավանդման մեթոդներ, ռազմավարություններ և ներառարկայական կապեր	20	10	5	2
4. Ռեսուրսների կառավարում	8	4	2	1
5. Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում	20	10	5	2
6. 21-րդ դարի հմտությունների խթանում	20	10	5	2
7. Սովորողների կարիքների բացահայտում	8	4	2	1
8. Ուսումնառության գնահատում	20	10	5	2
9. Ուսումնական գործընթացի համընդհանուր ներառականությունն ու մասնակցությունն ապահովող կարողություններ	16	8	4	2
10. Մասնագիտական զարգացման համար պատասխանատվության ստանձնում	6	4	2	1
11. Կրթության ոլորտի օրենսդրություն և պրակտիկայի իմացություն	6	4	2	1

12. Մասնագիտական բարեվարքություն, ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն	6	4	2	1
				11-16

Բաժին 1. «Առարկայական գիտելիքների զարգացում»

Ուսուցիչը գիտի իր դասավանդած առարկայի բովանդակությունը	
Բաժնի ուսումնառության վերջնարդյունքներ.	
Տարրական մակարդակ	Ձեռնահասության մակարդակ
Ուսուցիչն ունի առարկան դասավանդելու համար պահանջվող գիտելիքների իմացության ակնկալվող մակարդակ, որը բավարար է առարկայի չափորոշչի և ծրագրի պահանջները կատարելու համար: Գիտելիքը համարժեք է, բայց ոչ համապարփակ (ունի առարկայի մասին պատկերացում միայն դասագրքի բովանդակության սահմաններում):	

Բաժին 2. «Դասընթացների և դասերի պլանավորում»

Ուսուցիչը դասը պլանավորում է ըստ առարկայի թեմատիկ պլանի՝ ուսումնառության համընդհանուր ձևավորման սկզբունքներին համապատասխան, որոնք նպաստում են սովորողների արդյունավետ ուսումնառությանն ու զարգացմանը			
Բաժնի ուսումնառության վերջնարդյունքներ.			
Տարրական մակարդակ.	Ձեռնահասության մակարդակ.	Տիրապետման մակարդակ.	Փորձագետի մակարդակ.
Ուսուցիչը տեղյակ է թեմատիկ պլանի և դասի պլանավորման սկզբունքներին, օգտվում է պատրաստի պլաններից:	Ուսուցիչը կազմում է դասերի պլաններ՝ նշելով դասապլանի բաղադրիչները (նպատակը, խնդիրները, վերջնարդյունքները, ուսուցման և ուսումնառության մեթոդները):	Ուսուցիչը փոխկապակցում է դասապլանի բաղադրիչները՝ նշելով սովորողների մասնակցությունը ենթադրող գործողությունները:	Ուսուցիչը դասի պլանում ներառում է միջառարկայական կապեր՝ հաշվի առնելով տարբերակված ուսուցման սկզբունքները:

Բաժին 3. «Դասավանդման մեթոդներ, ռազմավարություններ և ներառարկայական կապեր»

ա. Ուսուցիչը, ելնելով դասի թեմայի առանձնահատկություններից, ընտրում և կիրառում է ուսումնական մեթոդներ և ռազմավարություններ՝ ապահովելով միջառարկայական, ներառարկայական և առօրյա կյանքի հետ կապեր:			
բ. Ուսուցիչը կարողանում է իրականացնել հեռավար և հիբրիդ ուսուցում՝ ըստ անհրաժեշտության:			
Բաժնի ուսումնառության վերջնարդյունքներ.			
Տարրական մակարդակ	Ձեռնահասության մակարդակ	Տիրապետման մակարդակ	Փորձագետի մակարդակ
Ուսուցիչը տեղյակ է ինտերակտիվ մեթոդների և ռազմավարությունների մասին:	Ուսուցիչը կիրառում է ինտերակտիվ մեթոդներ:	Ուսուցիչը հարմարեցնում է ինտերակտիվ մեթոդները և ռազմավարությունները դասավանդման նպատակներին և ուսումնառության վերջնարդյունքներին:	Ուսուցիչն ապահովում է միջառարկայական, ներառարկայական և սովորողների առօրյա կյանքի հետ կապերը:
Ուսուցիչը տեղյակ է հեռավար և հիբրիդ ուսուցման սկզբունքներին և մեթոդներին:	Ուսուցիչը կիրառում է հեռավար և հիբրիդ ուսուցման սկզբունքներին և մեթոդներին:	Ուսուցիչը հարմարեցնում է ինտերակտի մեթոդները ռազմավարությունները ֆիզիկական միջավայրին	Ուսուցիչը հեռավար և հիբրիդ ուսուցման համար դրսևորում է նոր մոտեցումներ՝ համատեղելով բազմազան ռեսուրսներ և գործիքներ:
		Ուսուցիչը հարմարեցնում է հեռավար և հիբրիդ ուսուցման սկզբունքները և մեթոդները դասավանդման նպատակներին և	

		ուսումնառության վերջնարդյունքներին:	

Բաժին 4. «Ռեսուրսների կառավարում»

ա. Ուսուցիչը ըստ անհրաժեշտության օգտվում է դպրոցի գրադարանում և լաբորատորիաներում առկա կրթական ռեսուրսներից			
բ. Ուսուցիչը օգտվում է առցանց կրթական ռեսուրսներից			
Բաժնի ուսումնառության վերջնարդյունքներ			
Տարրական մակարդակ.	Ձեռնահասության մակարդակ.	Տիրապետման մակարդակ.	Փորձագետի մակարդակ.
Ուսուցիչը տեղյակ է, թե ինչ ռեսուրսներ են առկա դպրոցի գրադարանում կամ լաբորատորիաներում:	Ուսուցիչը կիրառում է դպրոցի գրադարանում և լաբորատորիաներում առկա ռեսուրսները:	Ուսուցիչը հարմարեցնում է կիրարվող առկա ռեսուրսները դասավանդման նպատակներին և ուսումնառության վերջնարդյունքներին:	Ուսուցիչը օգտվելով առկա ռեսուրսներից ստեղծում է նոր ուսումնական ռեսուրսներ:
Ուսուցիչը տեղյակ է, թե ինչ ռեսուրսներ են առկա համացանցում.	Ուսուցիչը կիրառում է համացանցում առկա ռեսուրսները:	Ուսուցիչը հարմարեցնում է կիրառվող առցանց ռեսուրսները դասավանդման նպատակներին և ուսումնառության վերջնարդյունքներին:	Ուսուցիչը օգտվելով առցանց ռեսուրսներից՝ ստեղծում է նոր ուսումնական ռեսուրսներ:

Բաժին 5. «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում»

Ուսուցիչը կիրառում է ՏՀՏ միջոցները (համակարգիչ/պլանշետ/բջջային հեռախոս/օնլայն հավելվածներ ներառյալ տեսակոնֆերանսի հարթակներ)՝ ապահովելով սովորողների ուսումնառության համար բազմազան մեթոդներ ինչպես նյութի մատուցման, այնպես էլ գիտելիքների ստուգման և սովորողների ներգրավման նպատակներով:			
Բաժնի ուսումնառության վերջնարդյունքներ			
Տարրական մակարդակ	Ձեռնահասության մակարդակ	Տիրապետման մակարդակ	Փորձագետի մակարդակ
Ուսուցիչը տեղյակ է ՏՀՏ գործիքների և էլեկտրոնային անվտանգության ուղեցույցների մասին:	Ուսուցիչը կիրառում է ՏՀՏ գործիքները:	Ուսուցիչը հարմարեցնում է ՏՀՏ գործիքների օգտագործումը՝ դասավանդման նպատակներին և ուսումնառության վերջնարդյունքներին՝ ելնելով դասարանի կարիքներից:	Ուսուցիչը, համատեղելով ՏՀՏ գործիքները, ապահովում է սովորողների ուսումնառության համար բազմազան մեթոդներ ինչպես նյութի մատուցման, այնպես էլ գիտելիքների ստուգման և սովորողների ներգրավման նպատակներով:

Բաժին 6. «21-րդ դարի հմտությունների խթանում»

ա. Ուսուցիչը կարողանում է սովորողների մոտ զարգացնել մտածողության հմտություններ (ստեղծագործականության և նորարարության, քննադատական մտածողության, խնդիրների լուծման, որոշումների կայացման, սովորել սովորելու հմտություններ)			
բ. Ուսուցիչը կարողանում է սովորողների մոտ զարգացնել աշխատանքային հմտություններ (հաղորդակցություն, համագործակցություն (թիմային աշխատանք))			
գ. Ուսուցիչը կարողանում է սովորողների մոտ զարգացնել մեդիագրագիտության հմտություններ			
դ. Ուսուցիչը կարողանում է սովորողների մոտ զարգացնել իրական աշխարհում ապրելու հմտություններ (քաղաքացիություն, կյանք և կարիերա, անձնական և սոցիալական պատասխանատվություն)			
Բաժնի ուսումնառության վերջնարդյունքներ			
Տարրական մակարդակ.			

	Ձեռնահասության մակարդակ.	Տիրապետման մակարդակ	Փորձագետի մակարդակ մակարդակ
Ուսուցիչը տեղյակ է մտածողության հմտությունների զարգացման ձևերի մասին:	Ուսուցիչը կիրառում է մտածողության հմտությունների զարգացմանն ուղղված մեթոդներ և ռեսուրսներ:	Ուսուցիչը հարմարեցնում է մտածողության հմտությունների զարգացմանն ուղղված մեթոդները և ռեսուրսները դասավանդման նպատակներին և ուսումնառության վերջնարդյունքներին:	Ուսուցիչը ստեղծում է բնականոն միջավայր՝ առավելագույնի հասցնելու սովորողի կողմից մտածողության հմտությունների ակտիվ կիրառումը:
Ուսուցիչը տեղյակ է աշխատանքային հմտությունների զարգացման ձևերի մասին:	Ուսուցիչը կիրառում է աշխատանքային հմտությունների զարգացմանն ուղղված մեթոդներ և ռեսուրսներ:	Ուսուցիչը հարմարեցնում է աշխատանքային հմտությունների զարգացմանն մեթոդները և ռեսուրսները դասավանդման նպատակներին և ուսումնառության վերջնարդյունքներին:	Ուսուցիչը ստեղծում է բնականոն միջավայր՝ առավելագույնի հասցնելու սովորողի կողմից աշխատանքային հմտությունների ակտիվ կիրառումը:
Ուսուցիչը տեղյակ է մեդիագրագիտության հմտությունների զարգացման ձևերի մասին:	Ուսուցիչը կիրառում է մեդիագրագիտության հմտությունների զարգացմանն ուղղված մեթոդներ և ռեսուրսներ:	Ուսուցիչը հարմարեցնում է մեդիագրագիտության հմտությունների զարգացմանն ուղղված մեթոդները և ռեսուրսները դասավանդման նպատակներին և ուսումնառության վերջնարդյունքներին:	Ուսուցիչը ստեղծում է բնականոն միջավայր՝ առավելագույնի հասցնելու սովորողի կողմից մեդիագրագիտության հմտությունների ակտիվ կիրառումը:

Ուսուցիչը տեղյակ է իրական աշխարհում ապրելու հմտությունների զարգացման ձևերի մասին:	Ուսուցիչը կիրառում է իրական աշխարհում ապրելու հմտությունների զարգացմանն ուղղված մեթոդներ և ռեսուրսներ:	Ուսուցիչը հարմարեցնում է աշխարհում ապրելու հմտությունների զարգացմանն ուղղված մեթոդները և ռեսուրսները դասավանդման նպատակներին և ուսումնառության վերջնարդյունքներին:	Ուսուցիչը ստեղծում է բնականոն միջավայր՝ առավելագույնի հասցնելու սովորողի կողմից իրական աշխարհում ապրելու հմտությունների ակտիվ կիրառումը:
		Ուսուցիչը հարմարեցնում է 21-րդ դարի առաջնորդության հմտությունները հասարակական կյանքին:	Ուսուցիչը հմտորեն կիրառում է 21-րդ դարի առաջնորդության հմտությունները:

Բաժին 7. «Սովորողների կարիքների բացահայտում»

Ուսուցիչը կարողանում է բացահայտել յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքները և անհատական առանձնահատկությունները:			
Բաժնի ուսումնառության վերջնարդյունքներ			
Տարրական մակարդակ	Ձեռնահասության մակարդակ	Տիրապետման մակարդակ	Փորձագետի մակարդակ
Ուսուցիչը տեղյակ է դասարանի կրթական կարիքների և դրանց բացահայտման ձևերի մասին:	Ուսուցիչը կիրառում է դասարանի կրթական կարիքների բացահայտման ձևերը:	Ուսուցիչը, հաշվի առնելով դասարանի կրթական կարիքները, դասը վարելիս կիրառում է համապատասխան ռազմավարություններ:	Ուսուցիչը, հաշվի առնելով սովորողների անհատական առանձնահատկությունները, դասարանի կրթական կարիքները, դասը վարելիս կիրառում է

			համապատասխան ռազմավարություններ:
		Ուսուցիչը կիրառում է սովորողների ուսումնառության ոճերին համապատասխան ուսումնական ռեսուրսներ:	Ուսուցիչը ստեղծում է սովորողների ուսումնառության ոճերին համապատասխան ուսումնական ռեսուրսներ:

Բաժին 8. «Ուսումնառության գնահատում»

ա.Ուսուցիչը գնահատումն իրականացնում է գնահատման սկզբունքներին (օբյեկտիվություն, հավաստիություն, հուսալիություն) և մեթոդաբանության պահանջներին համապատասխան:			
բ.Ուսուցիչը գնահատում է յուրաքանչյուր սովորողի վարքագծի, դիրքորոշման և արժեքային համակարգի զարգացման ընթացքը:			
Բաժնի ուսումնառության վերջնարդյունքներ			
Տարրական մակարդակ	Ձեռնահասության մակարդակ	Տիրապետման մակարդակ	Փորձագետի մակարդակ
Ուսուցիչը տեղյակ է սովորողների գիտելիքների գնահատման սկզբունքներին և մեթոդաբանությանը:	Ուսուցիչը կիրառում է սովորողների գիտելիքները և հմտությունները գնահատելու սկզբունքները և մեթոդաբանությունը:	Ուսուցիչը հարմարեցնում է գնահատման մեթոդաբանությունը և գործիքները դասավանդման նպատակներին և ուսումնառության վերջնարդյունքներին:	Ուսուցիչը կիրառում է իր կողմից մշակված գնահատման գործիքները:
Ուսուցիչը տեղյակ է սովորողի վարքագծի, դիրքորոշման և արժեքային համակարգի զարգացման գնահատման գործիքներին:	Ուսուցիչը կիրառում է սովորողի վարքագծի, դիրքորոշման և արժեքային համակարգի զարգացման գնահատման գործիքները:	Ուսուցիչը հարմարեցնում է սովորողի վարքագծի, դիրքորոշման և արժեքային համակարգի	Ուսուցիչը ստեղծում է սովորողի վարքագծի, դիրքորոշման և արժեքային համակարգի զարգացման

		զարգացման գնահատման գործիքները	գնահատման գործիքները՝ կրթական կարիքներին, դասավանդման նպատակներին և ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխան:

Բաժին 9. «Ուսումնական գործընթացի համընդհանուր ներառականությունն ու մասնակցությունն ապահովող կարողություններ»

Ուսուցիչը կարողանում է ապահովել կրթության կազմակերպման հավասար մասնակցությունը, հնարավորություններ և մատչելիություն՝ յուրաքանչյուր սովորողի համար, բացառելով բուլինգը, բռնությունը և գենդերային խտրականությունը:			
Բաժնի ուսումնառության վերջնարդյունքներ			
Տարրական մակարդակ	Ձեռնահասության մակարդակ	Տիրապետման մակարդակ	Փորձագետի մակարդակ
Ուսուցիչը տեղյակ է համընդհանուր ներառական կրթության սկզբունքներին, այդ թվում՝ բուլինգի, բռնության և գենդերային խտրականության:	Ուսուցիչը կիրառում է համընդհանուր ներառական կրթության սկզբունքները՝ ցուցաբերելով հավասար և հարգալից վերաբերմունք՝ բացառելով բուլինգը, բռնությունը և գենդերային խտրականությունը:	Ուսուցիչը ապահովում է յուրաքանչյուր սովորողի մասնակցությունը ուսումնական գործընթացներին՝ օգտագործելով տարբերակված ուսուցման սկզբունքները՝ բացառելով բուլինգը, բռնությունը և գենդերային խտրականությունը:	Ուսուցիչը ներգրավում է բոլոր շահագրգիռ կողմերին և կիրառում է համապատասխան ուսումնական գործընթացներ յուրաքանչյուր սովորողին միտված՝ ներառական կրթական միջավայր ստեղծելու և ուսումնական գործընթաց կազմակերպելու համար՝ բացառելով բուլինգը, բռնությունը և գենդերային խտրականությունը:

Բաժին 10. «Մասնագիտական զարգացման համար պատասխանատվության ստանձնում»

Ուսուցիչը օբյեկտիվորեն գնահատում է իր մասնագիտական զարգացման կարիքները, ընտրում նպատակահարմար դասընթացներ (առկա, հեռավար կամ հիբրիդ), իրականացնում է գիտամանկավարժական գործունեություն:
Բաժնի ուսումնառության վերջնարդյունքներ

Տարրական մակարդակ	Ձեռնահասության մակարդակ	Տիրապետման մակարդակ	Փորձագետի մակարդակ
Ուսուցիչը տեղյակ է սեփական մասնագիտական կարիքների և ուսումնառության նախընտրությունների գնահատման ձևերի մասին:	Ուսուցիչը իրականացնում է կարիքների գնահատում, որի հիման վրա ընտրում է մասնագիտական զարգացման համապատասխան դասընթացներ, հնարավորություններ, ռեսուրսներ:	Ուսուցիչը սահմանում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ նպատակներ և զբաղվում է ինքնակրթությամբ՝ փոխանցելով ձեռք բերած գիտելիքը և փորձառությունը:	Ուսուցիչը մասնակցում է համաժողովներին, մասնագիտական զարգացմանն ուղղված այլ միջոցառումներին՝ համագործակցելով բոլոր շահագրգիռ կողմերի հետ:
			Ուսուցիչը ներկայացնում է սեփական փորձառությունը մասնագիտական զարգացմանն ուղղված միջոցառումներում:

Բաժին 11. «Կրթության ոլորտի օրենսդրություն և պրակտիկայի իմացություն»

Ուսուցիչը կարողանում է օգտվել հանրակրթության ոլորտի օրենսդրությունից՝ իր աշխատանքն ու մասնագիտական գործունեությունը կազմակերպելու համար:			
Բաժնի ուսումնառության վերջնարդյունքներ			
Տարրական մակարդակ	Ձեռնահասության մակարդակ	Տիրապետման մակարդակ	Փորձագետի մակարդակ մակարդակ
Ուսուցիչը տեղյակ է կրթության ոլորտի օրենսդրությանը, կարգերին:	Ուսուցիչը կիրառում է կրթության ոլորտի օրենսդրության և կարգերի իմացությունը իր աշխատանքում:	Ուսուցիչը մասնակցում է կրթության ոլորտի օրենսդրության վերաբերյալ քննարկումներին՝	Ուսուցիչը գործող կրթության ոլորտի օրենսդրության բարելավման նպատակով մասնակցում է

		ներկայացնում առաջարկություններ:	օրենսդրական ակտերի մշակման գործընթացին:

Բաժին 12. «Մասնագիտական բարեվարքություն, ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն»

Ուսուցիչը կարողանում է կազմակերպել իր աշխատանքը՝ մասնագիտական բարեվարքության, ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություններին համապատասխան			
Բաժնի ուսումնառության վերջնարդյունքներ			
Տարրական մակարդակ	Ձեռնահասության մակարդակ	Տիրապետման մակարդակ	Փորձագետի մակարդակ
Ուսուցիչը տեղյակ է մասնագիտական բարեվարքության և քաղաքացիական կարողունակության դրսևորման ձևերին:	Ուսուցիչը իր աշխատանքով նպաստում է մասնագիտական բարեվարքության և ժողովրդավարական արժեհամակարգի ձևավորմանը:	Ուսուցիչը սովորողների մոտ ձևավորում է ժողովրդավարական արժեհամակարգ:	Ուսուցիչը տարածում է մասնագիտական բարեվարքության և ժողովրդավարական արժեհամակարգը դպրոցում և դպրոցից դուրս՝ սերտորեն համագործակցելով շահագրգիռ կողմերի հետ:
		Ուսուցիչը կարողանում է մշակել ժողովրդավարական արժեհամակարգի ձևավորմանը միտված միջոցառումներ:	Ուսուցիչը ձևավորում է սովորողների բարեվարքության և ժողովրդավարական արժեհամակարգը:

		Ուսուցիչը նպաստում է սովորողների բարեվարքության և ժողովրդավարական արժեհամակարգի ձևավորմանը:	Ուսուցիչը ստեղծում է ժողովրդավարական արժեհամակարգի ձևավորմանը միտված միջոցառումների ծրագրեր:
			Ուսուցիչը, համագործակցելով շահագրգիռ կողմերի հետ, իրականացնում է մասնագիտական բարեվարքությանը և ժողովրդավարական արժեհամակարգի ձևավորմանը միտված գիտելիքների և փորձառության փոխանցում: